

/hau/ семантически связаны с армянскими словами *ամբողջ*, *ամէն*, *համայն*, *հանուր*, которые происходят от одного корня и имеют параллели в других индоевропейских и некоторых финно-угорских языках. Предполагаем, что рассматриваемые слова исконно армянские.

Ключевые слова: звукосочетания *ամ-/ան-*, *համ-/հան-*, индоевропейские языки, финно-угорские языки, исконно армянские слова, заимствования.

G.V. NIKOGHOSYAN

ETYMOLOGY OF SOME ARMENIAN WORDS BEGINNING WITH THE LETTER COMBINATIONS *ամ-/ան-*, *համ-/հան-*

In this article, several Armenian words with initial sound combinations *ամ-/ան-*, *համ-/հան* are analyzed. Some of these words have no etymology, others are considered to be foreign borrowings: In modern Armenian they are simple words, but in the pre-written period of the language they were compounds. The sound combinations *ամ-/ան-*, *համ-/հան* are semantically connected with Armenian words *ամբողջ*, *ամէն*, *համայն*, *հանուր*, all of which are of the same origin and have cognate forms in other Indo-European and some Fenno-Ugric languages. It is supposed that the words analyzed in the article are native Armenian words.

Keywords: sound combinations *ամ-/ան-*, *համ-/հան*, Indo-European languages, Fenno-Ugric languages, native Armenian words, foreign borrowings.

ՀՏԴ 81'282.4: 821.19

Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ, Ն.Բ. ԳԱԼՍՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՄԱՏՆԵՐ

Քննվում է ազգային ինքնության թեման ամերիկահայ անգլիագիր գրող Դայանա Տեր-Հովհաննիսյանի պոեզիայում, բացահայտվում և լուսաբանվում հեղինակի ստեղծագործական ներքին շերտերում ձևավորված առաջադրույթները, ամերիկահայության բարոյաբանական տազնապները, ազգային հոգեբանությամբ ներծծված հայոց դիմադրական ոգին: Փորձ է արվել մատնանշելու գրողի տեղը ամերիկյան գրականությունում, նրա ունեցած դերը ազգապահպանության մեջ, քաղաքացիական և հայրենասիրական ընդգծված նկրտումները:

Առանցքային բառեր. ազգային ինքնություն, դիմակայություն, ընտանեկան պատում, սերունդ, հայրենիք, կարոտ, օտար եզերք:

Ներածություն: Հայ-ամերիկյան անգլիագիր գրողների նման Դայանա Տեր-Հովհաննիսյանին մտահոգել է աշխարհասփյուռ հայության վաղվա օրը: Իր չափածո ստեղծագործություններով փորձել է հային հայ պահել օտար ափերում,

նպաստել նահանջի կանխմանը՝ կարևորելով հայ ավանդական ընտանիքի, ազգային էության, մտածելակերպի պահպանումը: Դայանա Տեր-Հովհաննիսյանն իր պոեզիայում կարևորել է ժողովրդի ազգային դիմագծերի պաշտպանությունը, դիմորոշությունը, պայքարի ու ընդվզման արտահայտությունը:

Նորօրյա մարտահրավերների, լինելության բարդ իրավիճակների պայմաններում թեման ունի արդիական հնչեղություն: Իր բանաստեղծությունների հիմքում գրողը դրել է ազգային ինքնության պահպանման խնդիրը, որն առավել կարևոր է օտար եզերքներում հայրենիքից կտրված հայերի համար, որոնք կամա թե ակամա դառնում են օտար մշակույթի մի մասնիկը, ընդունում օտարների վարքն ու բարքը, սովորույթները՝ հեռանալով ազգային ավազանից:

Ուսումնասիրության մեթոդը: Հոդվածում կիրառվել են պատմահամեմատական մեթոդը, գրական երկերի վերլուծության համակարգային և ամբողջական վերլուծության սկզբունքը, օգտագործվել ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները:

Քննարկման արդյունքները: Օտարագիր հայ գրողները ցավով են նկատում, որ ժամանակն ու միջավայրը հեռացնում են հային ազգային խորհրդից. և՛ օտար բարքերը, և՛ կենցաղը աստիճանաբար դառնում են կենսաձև, աստիճանաբար դուրս է մղվում մայրենին, փոխվում են բարոյական ընկալումները: Մտահոգիչ է իրողությունը: Ահա այս հարաճուն դիմորոշ դարձող հարցադրմանն են արձագանքում օտարագիր հայ գրողներն իրենց երկերում, որոնցում պարզորոշ ընդգծվում են նոր աշխարհի «օրենքները», բարոյական չափանիշները, հայի ներքին դրաման՝ հին ու նոր կյանքի համադրությամբ, նյութական և հոգևոր շահագրգռություններով: Որտեղ էլ լինեն օտարագիր հայ գրողները, նրանք իրենց ստեղծագործություններով հետամուտ են լինում ազգային ինքնության, ազգային ոգու պահպանմանը, առանց որի Սփյուռքում հայը, որն իր ոտքերի տակ չունի ազգային ենթահող, դարերով մշակված կենցաղ, ազգային միջավայր, ըղձական հայրենիքի տեսիլ, դատապարտված է ձուլման:

Դայանա անհատը և լրագրողը: Ազգային ինքնության թեմային է անդրադարձել նաև Դայանա Տեր-Հովհաննիսյանը: Իր չափածո գործերում կաևորել է ազգապահպանությունը՝ արթուն պահելով ազգային ինքնության զգացումը:

Շատ ու շատ հայրենակիցների նման դառն ճակատագրի բերումով ծնվել և մեծացել է Ամերիկայում: Ի տարբերություն իր որոշ բախտակիցների՝ Դայանա Տեր-Հովհաննիսյանն ստացել է հայեցի դաստիարակություն, որում իրենց մեծ դերն են ունեցել պապը, տատը, ծնողները, որոնց էլ միշտ սիրով ու կարոտով է հիշել բանաստեղծուհին: Շնորհիվ նրանց՝ բանաստեղծուհին ամուր կապված է մնացել ազգային արմատներին ու մշակույթին: Ապագա բանաստեղծուհին

տարվել է անգլերենի ուսումնասիրությամբ և ցանկացել է բանաստեղծուհի դառնալ: Բայց արդյունքում լսել է պապին, որը նրան ասել է՝ հայերն առանց այդ էլ շատ բանաստեղծներ ունեն, լրագրողներ են պետք, որոնք աշխարհին կպատմեն հայերի պատմությունը [1, էջ 3]:

Որպես լրագրող՝ աշխատել է ամերիկյան թերթերում: Լույս է ընծայել բանաստեղծությունների ժողովածուներ՝ «Ինչպես ընտրես քո անցյալը» (1978), «Ժամանակի մասին» (1987), «Հացի երգը, աղի երգը» (1990): Եղել է «Նոր Անգլիայի» բանաստեղծների միության նախագահը: Դայանա Տեր-Հովհաննիսյանը զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ՝ օտար ընթերցողներին և անգլախոս հայերին ներկայացնելու հայ պոեզիան, վերջիններիս կապելով հայ մշակույթին, քանի որ ազգային ինքնությունը պահպանելու մի միջոցը ազգային մշակույթին մոտ լինելն է: «Ես սկսեցի այս աշխատանքը, քանի որ անգլերենով գոյություն չունեի ժամանակակից հայ պոեզիայի ժողովածու,-վկայել է բանաստեղծուհին,- անցյալի պոետներն առանձին բանաստեղծություններ են թարգմանել, նրանց մեջ հատկապես առանձնացել է Հենրի Լոնգֆելլոն: 1896 թվականին Ալիս Սթոուն Բլեքուելը հրատարակել է հայ պոեզիայի առաջին անգլերեն ժողովածուն՝ իր հայ բարեկամների կատարած տողացի թարգմանությունների հիման վրա... Այնուհետև 1917-ին նա մի քանի այլ բանաստեղծություններ էլ է թարգմանել և Մերձավոր Արևելքի նպաստամատուց հանձնախմբի համար վերահրատարակել իր գիրքը՝ աշխարհի ուշադրությունը գրավելու դեպի 1915-ին զոհված հայ բանաստեղծները և Հայոց ցեղասպանությունը... «Իրականում մեկ այլ խմբագիր ինձ հրավիրեց հանդիպման և ասաց, որ մտադիր է «Քրիսչըն սայընս մոնիթոր» թերթում համաշխարհային պոեզիայի էջ բացել և ցանկանում է, որ ես թարգմանեմ հայ բանաստեղծների գործերը... Ես ասացի, որ այնքան լավ չեմ տիրապետում հայերենին... Նա նայեց ինձ և ասաց. «Դե՛, դու երիտասարդ ես... Սովորի՛ր»» [2, էջ 2]:

Բանաստեղծուհին անգլերեն է թարգմանել Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Գևորգ Էմինի, Նահապետ Քուչակի, Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունները, որոնք 1979 թ. -ին հրատարակել է «Հայ բանաստեղծության անթոլոգիա» ժողովածուում: 2005-ին բանաստեղծուհին ընթերցողի դատին է հանձնում երկրորդ՝ «Մյուս ծայնը» թարգմանական ժողովածուն, որտեղ տեղ են գտալ հայ կին գրողների ստեղծագործությունները: Բանաստեղծուհին հիմնել է Դանիել Վարուժանի անվան մրցանակ:

«Օտարներից մենք միշտ լսել ենք, որ հրաշալի գրականություն ունենք,-վկայում է ամերիկահայ գրաքննադատ Նոնա Բալաքյանը,-բայց մինչև Դայանա Տեր-Հովհաննիսյանի թարգմանությունները գաղափար չունեինք, թե որքան հարուստ է այն» [3, էջ 12]:

1985 թվականին Երևանում Գևորգ Էմինի և Վահագն Դավթյանի թարգմանությամբ լույս է տեսել Դայանա Տեր-Հովհաննիսյանի «Սև աչքեր՝ կանաչ աչքերի խորքում» բանաստեղծությունների ժողովածուն, 1996 թվականին՝ «Ծաղիկների հովիտը», 2002-ին Լևոն Անանյանի խմբագրությամբ հրատարակվել է «Վերադարձի օրը», որը կազմված է «Սև աչքեր՝ կանաչ աչքերի խորքում» և «Միակ սեր» (նոր թարգամություններ) բաժիններից: 1994 թ. -ին և 1999 թ. -ին դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանում:

Դայանա Տեր-Հովհաննիսյանն իր կյանքում մեծ տեղ է հատկացրել նաև հայկական երգին ու պարին:

«Ես չդարձա հայ այնքան ժամանակ,-վկայում է բանաստեղծուհին,- մինչև չգնացի Նյու Յորք, չերգեցի հայկական երգչախմբում և չպարեցի հայկական խմբերում» [4, էջ 71]: Ինքնաճանաչման և ինքնաբացահայտման միջոցով Դայանա Տեր-Հովհաննիսյանը պարզում է իր ինքնությունը, պատմական ու անհատական լինելությունը: Բանաստեղծուհին ինքնադրսևորվելու, իր հույզերն ու խոհերը արտահայտելու համար փորձում է ճանաչել իրեն և այդ ճանապարհով է, որ ի վերջո հայտնաբերում է սեփական էության, հոգեբանության և մտայնության ակունքները: Իրեն լիիրավ հայ համարելով՝ նա իր ստեղծագործություններով օտար ընթերցողին ներկայացրել է իր ազգային մշակույթը, հարազատ ժողովրդի ազգային էությունը, մտածելակերպը, ապրելու անկոտրում ոգին, ողբերգական պատմությունը:

Դայանա բանաստեղծուհին: Դայանա Տեր-Հովհաննիսյանի բանաստեղծական աշխարհն աչքի է ընկնում գույների բազմազանությամբ, հայկականության հարուստ անդրադարձումներով: Ինքնաճանաչումը խորիմաստ դրսևորումներ է ստացել բանաստեղծուհու պոեզիայում, որտեղ առավել մասնավորվում են ազգային յուրահատկությունները, բնավորությունն ու հոգեբանությունը: Եվ դա ոչ թե բացառիկության համոզմունք է, այլ ժողովրդի ինքնատիպության դրսևորում: «Սև աչքեր՝ կանաչ աչքերի խորքում» բանաստեղծական շարքը բացվում է «Արևը քեզ լինի» բանաստեղծությամբ: Առաջին իսկ ստեղծագործությամբ բանաստեղծուհին ներկայացնում է հայի ազգային էությունը, բնավորությունը, հատկանիշները, որոնք միայն հայինն են: Հոր մահը տարբեր ազգեր վշտակցում են յուրովի: Այսպես՝ իռլանդացին որպես սփոփանք հայրակորույս որդուն ասում է. «Դու վատ եղանակին հովանոցդ կորցրիր», անգլիացին՝ «Այսօր մի ոտնաչափ դու խրվեցիր հողում», ֆրանսիացին՝ «Ինքդ ես հիմա դառնում հայրը քո սեփական», ամերիկյան հնդկացին՝ «Նա ետ պիտի դառնա գարնան ամպրոպ դարձած», իսկ ահա հայի վշտակցությունն ազգային էությունից բխող մաղթանք է.

Որդի՛ս, արևը քեզ լինի. . .

Թե մեռել է հայրդ, հայը ասում է միշտ.

-Արեգակը նրա տեղափոխվեց քո մեջ,

Եվ դու ապրես պիտի լույսերի մեջ քո հոր [5, էջ 4]:

Հայ ազգային ոգու, ինքնատիպության առավել ցայտուն դրսևորվում է «Մեր բոլորի մայրը» բանաստեղծությունը: Բանաստեղծուհին, հանձին իր տատի, պատկերել է համեստ ու պարկեշտ, քաջ ու խիզախ հայ կանանց, որոնք, անցնելով եղեռնի գեհենի միջով, Խարբերդից հասել են հեռու եզերքներ, բայց չեն կտրվել: Ոչ մի ազգի կին այնքան նվիրված և անձնագոհ չէ, որքան հայ կինը, որը պատրաստ է նահատակության՝ հանուն իր երկրի ու իր զավակի: Հայ կնոջ շնորհիվ է, որ հայը դարերով պահել է իր ազգային ինքնությունը, ապրել ու գոյատևել է:

Հայ կանայք. . .

Նրանք ծրագրավորված են,

Ի ծնե, վերուստ

Որպես նահատակ. . . Ուշադիր նայիր,

Եվ հայ կնոջ մեջ դու կույս կտեսնես

Ու միանձնուհի. . . նայիր վերստին

Եվ կհանդիպես կատաղի վագրի. . .

Չկա այնպիսի անձնագոհություն,

Ինքնուրացում ու նվիրվածություն,

Որ բաժին չընկներ հայ պարկեշտ կանանց. . . [5, էջ 89]:

Ազգային այս ինքնատիպությունը, ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Վ. Փարթամյանը, բանաստեղծության մեջ ներկայացվում են որպես բնավորության և հոգու կերտվածք: «Միակ սերը» բանաստեղծության մեջ Դայանան Փիթեր Բալաքյանի, Հովհաննես Փիլիկյանի նման ազգային ինքնության պահպանումը կարևորում է ազգի պատմության իմացությամբ, այն մայրական սիրով արթնացնում և վեր է հանում ազգային ոգին: Հայոց ամեն բառը մի պատմություն է, մի եղելություն.

Մեզ հարկավոր չէ հարուստ բառապաշար,

Բավական է ասենք Տիգրան,

Տիգրանակերտի պատերը վեր կհառնեն,

Բավական է ասենք Անի՝

Եկեղեցու հարյուրավոր զանգեր

Կղողանջեն ուժգին:

Բավական է ասենք Դեր Ջոր՝

Եփրատն իսկույն կընկղմվի
Արնաչոր, պապակ հատակում,
Երևան ասելիս իսկույն
Կծաղկեն բազմագույն շատրվաններ:
Բավական է ասենք՝ ձագս-
և մայրիկի ժպիտը
լույսի արագությամբ կհասցնի՝

անցնելով մի ամբողջ հավիտենության ճանապարհ [5, էջ 111]:

Բանաստեղծուհին հեռավոր եզերքների մեջ փնտրում է իր հայրենիքը, ապրում նրա տեսիլքով: «Դայանայի պոեզիան,- գրում է Վ. Սարոյանը,- շատ բանաստեղծական է, շատ համամարդկային և կատարելապես հայկական» [6, էջ 29]:

Աղջկան ծնված բանաստեղծության մեջ («Իմ աղջկան, որ բարձրանում է Հուդ լեռը») բանաստեղծուհին նրան մտովի տեղափոխում է հայրենի սրբազան լեռը՝ Արարատը, որը հայոց գոյության, հավերժության, տենչանքի ու մաքառման խորհրդանիշն է. լեռ, «որի կատարների ձյունաշերտերին հասած դու ջերմանաս պիտի» [7, էջ 5]:

«Դու իմ լեռն ես նաև» ստեղծագործությամբ բանաստեղծուհին իր սերն ու նվիրվածությունն է արտահայտում սրբազան լեռանը: Կտրելով հազարավոր կիլոմետրեր՝ անգլիագիր բանաստեղծուհին եկել, հասել է Երևան՝ տեսնելու, հիանալու բիրլիական լեռով, հոգեպնդվելու, ներքին ազդակներ ստանալու նրանից:

Երկար սպասումներից հետո վերջապես բանաստեղծուհուն բախտ է վիճակվում տեսնել Արարատը:

Եվ ես քեզ տեսա, տեսա վերջապես
կապույտ լույսերի մեջ խորասուզված՝
պատրաստ խփելու քո զարկը ազդու
ժամանակի և սահմանի միջով . . [7, էջ 48]:

«Արարատը մերն է» բանաստեղծությամբ Դայանա Տեր-Հովհաննիսյանը խորապես համոզված է, որ ինչ էլ պատահի, անգամ, եթե հայ ազգը չլինի, Արարատը հայինն է լինելու:

Երբ վերջին հայի խոսքը կլռի,
երբ հայի արյան վեջին կաթիլը
նույնիսկ ջուր խառնած
չի հոսի իսպառ, չի արթնացնի
այլ ցեղակիցների սրտեր,
երբ հայկական վերջին հուշը կմարի
այս երկրագնդի վրա,

երբ մեր պատմությունը կդառնա սոսկ պատմություն,
ոչ թե ապրելու դրդապատճառ,
կդառնա զուտ դատական գործ,
այդ ժամանակ կարող են
Արարատն անվանափոխել,
բայց ինչ էլ որ լինի, Արարատը մերն է,
Մերն է Արարատը [7, էջ 81]:

Իր հերոսներին բանաստեղծուհին պատկերել է ազգային նկարագրով, ազգային ինքնությամբ: Նրանց ճանաչելու, հասկանալու համար, բանաստեղծուհու խոր համոզմամբ, պետք է իմանալ նրանց դարավոր պատմությունը, գեթ մեկ անգամ լսած լինել սրտի խորքից բխող օրորոցային հին երգերը, որոնց մեջ ամփոփված է դարավոր ժողովրդի ազգային ոգին, հայդուկային հին երգերի տրուփը ըմբոստ, եղած լինել նրանց հայրենիքում, ավելին.

Ինչպես հասկանաս դու սերը նրա,
Խորհուրդը սիրո,
Եթե «կարոտ» բառը քո լեզվում չկա,
Չկա աշխարհի և ոչ մի լեզվում:
(«Մի օտար տղայի» [7, էջ 11])

«Հայր» բանաստեղծությամբ Տեր-Հովհաննիսյանը ներկայացնում է հայի ազգային նկարագիրը՝ լավատեսություն, անկոտրում կամք և դիմացկունություն, ապրելու, հավերժանալու ձգտում.

Նախ ասեմ ձեզ,
Որ մենք մեզ արմեն չենք կոչում
Միայն օտարազգիներն են
Մեզ այդպես անվանում:
Ապա ասեմ ձեզ այն,
Որ մենք լավատես ենք
ճակատագրի հանդեպ:
Երրորդ հերթին ասեմ,
Որ մենք դիմացել ենք ճանապահներին:
Չորրորդ հերթին ասեմ,
Որ այլընտրանք չունենք.

Մեզ մնում է անվերջ վեր բարձրանալ [7, էջ 82]:

«Երևան» բանաստեղծության մեջ գրողը ներկայացրել է հայ ազգի բնորոշ գծերից հյուրընկալությունը, ջերմ ընդունելությունը, ով էլ որ լինես, հարազատ թե օտարական, թշնամի թե բարեկամ, հայը իր երկրում գրկաբաց կընդունի

քեզ: Նա նման չէ արաբի, որ կարող է քեզ վրա թքել, հագուստդ պատառոտել, գերմանացու, որ արհամարհական երեսն է բեքում քեզնից.

Միայն մի երկրում և մի քաղաքում,
որը տարբեր է
ամեն մի ազգի ճամփորդի համար,
քեզ որպես քրոջ կողջունեն սիրով
(քրոջ, որ տուն է դարձել հայրական...)
և մի սիրո տեղ
հազար սեր կտան...[7, էջ 47]:

«Այս խորիմաստ, հուզիչ, կարեկցող և բարձրարվեստ բանաստեղծությունները հարստացնում են մեր լեզուն և ողջ ամերիկյան մշակույթը՝ Հայաստանը մեզ մոտ բերելով,- գրում է ամերիկացի գրող Ֆ. Դ. Ռիփլը, - դա կարկառուն արվեստ է, որ վեհացնում է մեզ» [7, էջ 63]:

Եզրակացություն: Դայան Տեր-Հովհաննիսյանն իր բանաստեղծություններով պատկերել է հարազատ հողից կտրված հայի՝ օտար միջավայրում ազգային արմատներից աստիճանական օտարումը, ցեղասպանության ականատեսների զավակներից ոմանց՝ անցյալի ըմբռնման և գնահատման անկարողությունը, պատմությունից դասեր չքաղելու ցավալի իրողությունը, ամերիկացումը, ազգային արժեքների ուրացումը, հայ ազգի բարոյական նկարագրի խաթարումը՝ փորձելով գեղարվեստի ուժով հային հետ պահել ուժացումից և օտարացումից, և նրանց ուղղորդում է դեպի ազգային արմատները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Sputnik**, Երևան, 2018, 3 Մարտի:
2. **Գասպարյան Դ., Ղալաջյան Ա.**, Անգլիագիր հայ բանաստեղծներ, Երևան, Գր. Տաթևացի հրատ., 2010, 125 էջ:
3. **Նյու Յորք Թայմս**, 1996, մայիս:
4. **Դայանա Տեր-Հովհաննիսյան**, Հինգ տարիների ընթացքում ես երազում շփվում էի Չարենցի հետ, www.anunner.com:
5. **Դայանա Տեր-Հովհաննիսյան**, Սև աչքեր՝ կանաչ աչքերի խորքում, Երևան, ՀԳՄ հրատ., 86 էջ:
6. **Բախչինյան Ֆ.**, Հայ լինելու քաղցրությունը, Երևան, «Գրանիտ» հրատ., 2003, 85 էջ:
7. **Դայանա Տեր-Հովհաննիսյան**, Վերադարձի օր, Երևան, ՀԳՄ հրատ., 2002, 92 էջ:

А.П. КАРАГУЛЯН, Н.Б. ГАЛСТЯН

ВОЗВРАЩЕНИЯ К НАЦИОНАЛЬНЫМ КОРНЯМ

Представлена тема национальной идентичности в поэзии английской писательницы американо-армянского происхождения. Даяна Тер-Оганнисян, раскрыла и осветила задачи, сформировавшиеся во внутренних творческих пластах автора, моральные тревоги американских армян, дух армянского сопротивления, пропитанный национальной психологией. Сделана попытка указать место писателя в американской литературе, его роль в сохранении нации, его гражданские и патриотические амбиции.

Ключевые слова: национальная идентичность, противостояние, семейные узы, поколение, Родина, тоска, чуждые берега.

H.P. KARAGULYAN, N.B. GALSTYAN

RETURN TO THE NATIONAL ROOTS

Dayana Ter-Hovhannisyan, an Armenian-American English writer, is one of those who have left their trace in the American literature crucible and became one of the advocates of preserving national identity. The purpose of the article is to present the theme of national identity in the poetry of the American-Armenian English-writing author Dayana Ter-Hovhannisyan, to reveal and elucidate the tasks formed in the inner creative layers of the author, the moral anxieties of American Armenians, the Armenian resistance spirit imbued with national psychology. An attempt has been made to point out the writer's place in American literature, her role in nationalism, her civic and patriotic ambitions. In her poetry, Dayana Ter-Hovhannisyan emphasized the protection of the national characteristics of the people, the expression of struggle and rebellion. In the conditions of today's challenges and difficult situations of existence, the topic has a modern resonance.

Keywords: national identity, confrontation, family bond, generation, homeland, longing, alien, environment.